ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/29» ԵԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 29.05.2019թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,
Գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ԹՎ ՊԾ մթերքի պլանավորման և ապահովման բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Մարգարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ս. Պետրոսյան,
ՀՀ ՋՈՒ ԹՎ ՊԾ զորային սննդի կազմակերպման և պահեստների ու տեխնիկական միջոցների բաժնի ՊԾ պահեստների և տեխնիկական միջոցների բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ա. Կարապետյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ Գ. Գևորգյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/29» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Գևորգյան)

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ. Գևորգյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/29» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակիցների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ի, մասնավորապես՝ մասնակցի կողմից 5-րդ չափաբաժնի մասով Հավելված 6.1-ով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է «ապակյա կամ պոլիմերային շշերով», անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչպիսի շշերով է կատարվելու մատակարարումը: Ուստի 30.05.2019թ., հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և մասնակցին ծանուցել անհամապատասխանության շտկման վերաբերյալ: Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը, և 05.06.2019թ. նիստը շարունակվել է:

Քանի որ 27.05.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 1308517 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ, որոնք գերազանցում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված շեմը, ուստի 30.05.2019թ. գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետը, որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը չհամապատասխանող և մերժել այն:

30.05.2019թ., «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/29» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ն:

1.2 Հանձնաժողովը որոշեց «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ին որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/29» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

1.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

1.4 Քանի որ 27.05.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 6296 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ, որոնք չեն գերազանցում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը և «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված շեմը, «Վաղատնի» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի, 04.06.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի, ուստի 05.06.2019թ. գնահատող հանձնաժողովը որոշեց «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ի, «Վաղատնի» ՍՊԸ-ի և «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

1.5 05.06.2019թ., հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցիչ, գնահատող հանձնաժողովի անդամ Ա. Կարապետյանի կողմից տրված մասնագիտական եզրակացությունը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/29» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից:

1.6 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/29» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Գևորգյան)

Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Հ. Մելիքյան
Գնահատող	Ա. Մարգարյան
Գնահատող	Ս. Պետրոսյան
Գնահատող	Ա. Կարապետյան
Գնումները համակարգող	Գ. Գևորգյան